



«ՇԱՆԹ ԴԱՇԻՆՔ» ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԻԱՍԻՆ ԴԵՊԻ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽ ՀԱՄԱՅՆՔ

1. ՀԱՄԱՅՆՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻ ԸՆԴԱՅՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ

Տաթև համայնքի մեր տեսլականն է. Տաթև համայնքը զարգացող գյուղատնտեսությամբ, զբոսաշրջային ինդուստրիայի խթանման համար ստեղծված արդի ենթակառուցվածքներով և բարձրակարգ հանրային ծառայություններ մատուցող համայնք է, որտեղ մարդկային և բնական ռեսուրսները, պատմամշակութային կոթողները խթան են հանդիսանում համայնքի բնականոն և կայուն զարգացման համար:

Որպես համերաշխություն և կայունություն բերող ուժ՝ մեր առաջին ծրագրային քայլը համայնքի քաղաքական հայեցակարգի ձևավորումն է և ներգրավումը ընդհանուր պետական քաղաքականության մեջ, որի արդյունքում կհաստատվի փոխադարձ կապ պետության և համայնքի միջև՝ համայնքը և նրա խնդիրները ներառելով պետության կողմից իրականացվող ծրագրերում, և դրանց լուծման նոր ճանապարհներ փնտրելով: Համայնքում պետք է վերականգնել միասնության, համերաշխության, հանդուժողականության մթնոլորտը, հատկապես համայնքի ընդհանուր շահերին առնչվող հարցերում՝ անկախ մարդկանց քաղաքական հայացքներից ու կուսակցական պատկանելությունից: Մենք որդեգրել ենք համայնքի բնակիչների շահերի պաշտպանության, կատարվող աշխատանքների հրապարակայնության ու թափանցիկության, քաղաքացիական հասարակության ձեւավորմանն ուղղված գործելառժը: Մենք համոզված ենք, որ միայն համայնքապետի եւ համայնքապետարանի հանդեպ բնակչության հավատի ու վստահության ամրապնդման շնորհիվ կկարողանանք հնարավորինս ակտիվացնել բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանն առնչվող հարցերի քննարկմանն ու լուծմանը:

Քաղաքական, տնտեսական և վարչական գործառույթները համայնքի ղեկավարը իրականացնելու է անձամբ՝ ղեկավարելով իր տեղակալ(ներ)ի, համայնքային ծառայողների և համայնքապատկան առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների գործունեությունը, որոնք ապահովում են իրենց վրա դրված պարտականությունների կատարումը և պատասխանատվություն են կրում դրանց կատարման համար: Կադրային ճիշտ քաղաքականությունը հանդիսանում է հաջողության ամենաառաջնային գրավականը: Կադրերի ընտրության եւ տեղաբաշխման ժամանակ պրոֆեսիոնալիզմը դիտվելու է որպես գլխավոր չափանիշ:

2. ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ, ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Պայմանավորված աշխարհաքաղաքական նոր իրավիճակով և համայնքի դիրքադրությամբ՝ առաջնային խնդիր շարունակում է մնալ անվտանգության ապահովման խնդիրը, որին որոշակիորեն լուծում տալու համար սկզբնական շրջանում իրականացնելու ենք հետևյալ միջոցառումները՝

- Համայնքի բոլոր բնակավայրերում ապաստարանների կառուցում, եղած ապաստարանների վերանորոգում, հարդարում
- Խոտ-Որոտան այլընտրանքային ճանապարհի բարեկարգում, փոսալցում, հարթեցում: Ճանապարհի ռազմաստրատեգիական նշանակությունը հաշվի առնելով՝ ծրագիր-

առաջարկի ներկայացում ՀՀ Կառավարությանը՝ ճանապարհի շուտափույթ ասֆալտապատման համար:

- Ուշադրության կենտրոնում ենք պահելու համայնքի տարածքում տեղաբաշխված զինվորական կառույցների հոգսերը:

3. ԱՎԱԳԱՆԻ-ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ աշխատանքով հաջողության հասնելու կարևորագույն գործոններից է համայնքի ղեկավար-ավագանի համատեղ և ներդաշնակ համագործակցությունը, ովքեր միաժամանակ պետք է հանդես գան որպես տեղական իշխանության հավասարազոր և միևնույն ժամանակ հակակշիռ կողմեր և լրացնեն ու աջակցեն իրար՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում: Այս համատեքստում անհրաժեշտ է կայացնել ավագանու ինստիտուտը. ավագանին ընտրվել է ժողովրդի կողմից, հետևաբար չի կարող ունենալ ձևական բնույթ և պետք է հստակ տիրապետի իր լիազորություններին և կատարի իր պարտականությունները:

4. ԱՌԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՓԱՍՏԱԳՐՈՒՄ ԵՎ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Յուրաքանչյուր խնդիր լուծելու համար անհրաժեշտ է կատարել նախնական վերլուծություն: Դրա համար, առաջին հերթին, իրականացնելու ենք առկա ռեսուրսների, հիմնական միջոցների հաշվառում և գույքագրում, այդ թվում՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքի, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, բյուջետային միջոցների, միևնույն ժամանակ անհրաժեշտ է նաև ճշգրտել ինչպես համայնքի հանդեպ ունեցած, այնպես էլ համայնքի այլ պարտատերերի հանդեպ ունեցած առկա պարտքերն ու պարտավորությունները և հետևողական կերպով հետամուտ ենք լինելու այդ հարցերի կանոնակարգմանը, դրանց իրավական հիմնավորվածությանը, անհամաչափության վերացմանը, ողջամտության սահմաններից դուրս կնքված գործարքների վերանայմանը և մեղավոր անձանց նկատմամբ համապատասխան օրինական միջոցների կիրառմանը: Համայնքային բյուջեի սեփական եկամուտների (հարկերի եւ տուրքերի) բազայի գույքագրումը, սեփական եկամուտների ավելացման հնարավորությունների ուսումնասիրումը կազմակերպելու ենք այնպես, որպեսզի արդյունքներն արտացոլվեն համայնքի 2022թ. վարչական բյուջեում:

Տնտեսական ոլորտի կանոնակարգումը իրականացնելու ենք անցյալի և արդի միջազգային փորձի համակցված վերլուծությամբ՝ հաշվի առնելով Տաթև համայնքի աշխարհագրական ու քաղաքական դիրքը, առկա ռեսուրսները, և այս ամենը դիտարկելու ենք գործող օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված իրավունքների տիրույթում:

Առկա ռեսուրսների և հաստատապես ակնկալվող միջոցների հաշվառմամբ՝ ներառյալ արտաքին ներդրումները, դոտացիաները, տեղական հարկերը և տուրքերը, նաև բյուջեի համալրման համար հնարավոր, օրենքով չարգելված այլ միջոցները, ինչպես նաև տնտեսական ու քաղաքական կանխատեսումների վերլուծությամբ կազմելու ենք Տաթև համայնքի զարգացման հնգամյա ծրագիր:

Ծրագրի կազմման աշխատանքները լինելու են առավելագույնս թափանցիկ՝ հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների և անհատների առաջարկները, ապահովելով նրանց մասնակցությունը իրենց ներկայացրած առաջարկությունների քննարկմանը:

5. ՆԵՐՂՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Ներդրողներին ներգրավելու համար կարևոր գործոններ են կայուն հարկային և մաքսային իրավական դաշտի ապահովումը, այդ ոլորտներում արտոնությունների սահմանումը: Յուրաքանչյուր ներդրող, ինչպես նաև տեղաբնակ գործարար պետք է երեք տարով ազատվի ստեղծած ձեռնարկության զբաղեցրած տարածքի համար հողի հարկի և գույքահարկի վճարումից, եթե ստեղծում է առնվազն 15 աշխատատեղ և պարտավորվում է իր ձեռնարկության աշխատողներին վճարել ամսական աշխատավարձ՝ ոչ պակաս, քան տվյալ պահին օրենքով սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի եռապատիկը:

6. ԲՅՈՒՋԵԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի բյուջեն անհրաժեշտ է համալրել՝ շեշտը դնելով համայնքին պատկանող կազմակերպությունների գործունեության արդյունքում ստեղծված եկամուտների վրա: Անհրաժեշտ է հստակ վերլուծել տնտեսական ուղությունները և հնարավորինս շատ ստեղծել համայնքապատկան առևտրային կազմակերպություններ, որոնց գործարկմամբ միաժամանակ կապահովվի ինչպես համայնքի բյուջեի համալրումը, այնպես էլ կենսական կարևորության խնդիրներից առաջնայինը՝ աշխատատեղերի ստեղծումը:

7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առանձնակի ուշադրություն ենք դարձնելու ծայրահեղ աղքատության մեջ գտնվող անձանց և ընտանիքներին, նրանց առաջին հերթին պետք է ապահովել աշխատանքով, հատկացնելու ենք միջոցներ նրանց երեխաների դպրոցական պարագաների և հագուստի համար, անել այն ամենը, ինչ անհրաժեշտ է նրանց հասարակությանը վերադարձնելու համար:

Հատուկ ուշադրություն ենք դարձնելու և աջակցություն են ստանալու ծնողազուրկ երեխաները, ոչ լիարժեք ֆիզիկական հնարավորություններ ունեցող անձինք՝ ապահովելով նրանց լիիրավ մասնակցությունը հասարակության շարքերում՝ ներառյալ ուսուցում, աշխատանք, սպորտ, արվեստ և այլն: Այն համայնքաբնակները, ովքեր մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին, Ղարաբաղյան առաջին , քառորյա և երկրորդ պատերազմներին, Վիետնամական և Աֆղանական պատերազմներին, ունենալու են հատուկ կարգավիճակը և օգտվելու են համայնքապետարանի կողմից սահմանված արտոնություններից և սոցիալական միջոցառումներից:

Երիտասարդ նորաստեղծ ընտանիքները լինելու են համայնքի ուշադրության կենտրոնում, նրանց պետք է աջակցել առանձին բնակարան և աշխատանք ունենալու գործում, խրախուսել բազմաթիվ երեխաներ ունենալու ձգտումը. ոչ ոք չպետք է վախենա ընտանիք

կազմելու և շատ երեխաներ ունենալու մտքից՝ տարակուսելով նրանց կերակրելու հնարավորությունից. համայնքը կարևորում և գնահատում է յուրաքանչյուրի ձգտումը և գործուն անջակցությամբ կանգնած է լինելու յուրաքանչյուրի կողքին:

Սոցիալական անջակցությունը իրականացվելու է համընդհանուր և հասցեական. յուրաքանչյուր քաղաքացի այս կամ այն չափով, նյութական կամ բարոյահոգեբանական տեսքով ունի սոցիալական անջակցության կարիք, և նա պետք է զգա և շոշափի համայնքի հոգացավորությունը իր հանդեպ:

8. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Կարևորելով քաղաքաշինական միջոցառումներից յուրաքանչյուրը՝ որպես ընդհանուր բարեկեցիկ համայնքի ստեղծման առանձին բաղադրարար, առանձնացնենք դրանցից մի քանիսը, որոնք առավել կարևոր են և ունեն հատուկ միջամտության կարիք:

Մասնավորապես՝

- Շինուհայր բնակավայրում իրականացնել բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, նորացում, պահպանմանն ուղղված միջոցառումներ
- Ընտանիքները, որոնք հնարավորություն ունեն բնակարան կառուցելու, կստանան համայնքապետարանի անջակցությունը և սիմվոլիկ գնով կկարողանան ձեռք բերել հողատարածք:
- Դեպի Հարժիս, Սվարանց, Տանձատափ տանող ճանապարհները պետք է ասֆալտապատվեն, քանի որ նշված ճանապարհներով երթևեկելը օրեցօր ավելի անհնարին է դառնում:
- Տաթև համայնքի բոլոր բնակավայրերում բարեկարգել դեպի այգիներ տանող և հանդամիջյան ճանապարհները:
- Կրթօջախների, սպորտային համալիրների, մանկապարտեզների, արվեստի և մշակութային օջախների կառուցում և վերագործարկում, մասնավորապես՝ Շինուհայր բնակավայրի մշակույթի շենքի հիմնային վերանորոգում և գործարկում, Շինուհայր բնակավայրի երաժշտական դպրոցի վերանորոգում, Տաթև բնակավայրում ուսուցման կենտրոնի ստեղծում, Սվարանց բնակավայրում վարչական շենքի վերանորոգում, Հարժիս և Հալիձոր բնակավայրերում մշակույթի շենքի կոսմետիկ վերանորոգում և հարդարում:
- Համայնքի բոլոր բնակավայրերում ջրահեռացման համակարգի ընդլայնում, նորոգում:
- Համայնքի բոլոր բնակավայրերում խմելու և ոռոգման ջրի ցանցերի վերանորոգում:
- Տաթև համայնքի բոլոր բնակավայրերում այգիների և կանաչապատ տարածքների ավելացում, շաբաթօրյակների և ծառատունկերի պարբերական կազմակերպում: Ուշադրության կենտրոնում պահել էկոլոգիական անվտանգության և բնապահպանական խնդիրները, կազմակերպել և իրականացնել ջրային և պատմամշակութային ռեսուրսների տարածքներում մաքրման և հետագա աղտոտվածությունը կանխարգելող միջոցառումներ, այդ աշխատանքներում

ներգրավել արտասահմանյան ներդրողներին և համապատասխան ոլորտի հասարակական կազմակերպություններին:

- Աղբահանության, սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետ կազմակերպում: Համայնքի սանիտարական վիճակի ապահովման գործին մասնակից ենք դարձնելու համայնքի տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտներին ու հասարակական կազմակերպություններին:

9. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքը և անձամբ համայնքապետը հատուկ ուշադրություն են դարձնելու գիտության, արվեստի և մշակույթի ոլորտների համաչափ և բազմաբովանդակ զարգացմանը:

Ըստ ոլորտների կրթօջախների արդիականցումը, բնականոն գործունեության ապահովումը, գիտության և արվեստի գործիչների նյութական ապահովվածությունը, նրանց գործերը հանրությանը ներկայացնելու և գնահատվելու հնարավորությունը, տաղանդավոր երեխաների բացահայտումը, հանճարեղ գիտնականների և արվեստագետների գործունեության պտուղները համաշխարհային ասպարեզ դուս բերելը համայնքի կարևորագույն խնդիրներից են:

Հատուկ ուշադրություն ենք դարձնելու երիտասարդ սերնդի նախադպրոցական և դպրոցական կրթությանը և դաստիարակությանը, յուրաքանչյուր երեխա՝ ներառյալ անապահով ընտանիքի, պետք է տիրապետի համակարգչին և ժամանակակից տեխնիկային, համացանցից օգտվելու ունակություններին: Յուրաքանչյուր սպորտային նվաճում խրախուսվելու է նյութական աջակցությամբ. մարզիկը պետք է իրեն զգա գնահատված և արժևորված: Աշխատանքներ են տարվելու համայնքում սպորտդպրոցի բացման ուղղությամբ: